ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ. փոստ՝ meo@ypc.am

Դիտորդ մարմնի կազմը

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Լևոն ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ի ՊԱՏԱՍԽԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ՝ antifake.am ԿԱՅՔԻ «Որքան գումար են ստացել Հայաստանում գործող ՀԿ-ները Արցախը հանձնելուն սատարելու դիմաց» հոդվածի վերաբերյալ

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը 2023 թվականի օգոստոսի 9-ին ստացել է Տեղեկատվական վեճերի խորհրդի (ՏՎԽ) դիմումը antifake.am կայքի «Որքան գումար են ստացել Հայաստանում գործող ՀԿ-ները Արցախը հանձնելուն սատարելու դիմաց» վերնագրով հրապարակման (29. 12. 2020)՝ մասնագիտական էթիկայի սկզբունքներին համապատասխանության վերաբերյալ խորհրդատվական կարծիք տրամադրելու խնդրանքով:

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը, տվյալ հրապարակումը քննելով էթիկական սկզբունքների կանոնագրի դրույթների և լրագրողական մասնագիտական նորմերի տեսանկյունից, ՏՎԽ-ին ներկայացնում է իր դիտարկումները և նկատառումները:

ԴՄ-ը մասնավորապես ուշադրություն է հրավիրում Կանոնագրի հետևյալ դրույթներին, որոնք ուղղակիորեն բխում են միջազգայնորեն ընդունված լրագրողական էթիկայի սկզբունքներից.

1.1. Մինչև հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել և չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ:

1.2. Հստակորեն ու լսարանի համար հասկանալի մատնանշել այն դեպքերը, երբ խմբագրությունը, ստանալով հանրային նշանակության տեղեկություններ, օգտագործել է բոլոր հնարավոր ողջամիտ միջոցները, սակայն չի կարողացել ճշտել փաստերը:

1.4. Փաստերի և տեղեկությունների շարադրանքը հստակ

սահմանազատել կարծիքներից, վերլուծություններից և մեկնաբանություններից:

1.5. Վերլուծություններ և մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի և հավաստի տեղեկությունների վրա:

1.6. Զգտել, որ հաղորդագրությունները, լուսանկարային, տեսագրված ու ձայնագրված նյութերը համապատասխանեն իրականությանը, վերնագրերը բխեն նյութի բովանդակությունից, չչարաշահվեն հանրային դեմքերի և սովորական մարդկանց անձնական տվյալների համընկնումները, մեջբերումները չօգտագործվեն համատեքստից դուրս:

2.1. Հնարավորինս նշել տեղեկությունների աղբյուրները:

6.1. Աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի դիտարկումները

1. Տվյալ հրապարակման վերնագրում արդեն իսկ կա խմբագրության համար անվիճելի ելակետ, ըստ որի՝ Հայաստանում գործող ՀԿ-ները գումար են ստացել Արցախը հանձնելուն սատարելու համար, մինչդեռ որևէ փաստացի կապ չկա այդ կազմակերպությունների ստացած դրամաշնորհների և Արցախի կամ որևէ այլ քաղաքական խնդրի առնչությամբ վերջիններիս գործունեության միջև: Սա Կանոնագրի 1.5 և 1.6, ինչպես նաև միջազգայնորեն ընդունված մասնագիտական էթիկայի հիմնարար նորմերի խախտում է:

2. Տվյալ հրապարակման ֆոտոկոլաժում 4 անձանց լուսանկարներ են և 8 ՀԿ-ների լոգոտիպեր: Հանրությանը հայտնի անձանց դիմանկարները «Արցախը հանձնելուն սատարելու» վերնագրային բառաշերտի ներքո ներկայացնելն արդեն իսկ կանխակալ ու նեգատիվ ֆոն է ստեղծում նրանց մասին և դրդում է, որ ընթերցողը լրացուցիչ ագրեսիայով լցվի այդ անձանց դեմ և վերաբերվի որպես Արցախը հանձնելուն սատարողների: Սա նույնպես Կանոնագրի 1.6. դրույթի խախտում է:

3. Տվյալ հրապարակման մեջ նախկինում տարածված տեղեկություններ են մեջբերվում դրամաշնորհների գումարների մասին, որոնց ճշգրտության վերաբերյալ հիմնավոր կասկածներ են հնչեցվել սոցցանցերում և լրատվամիջոցներում: Antifake.am կայքի հեղինակները, համաձայն մասնագիտական էթիկայի Կանոնագրի 1.1. դրույթի, առնվազն պարտավոր էին հղում կատարել այդ կասկածներին, մանավանդ որ այլ հասանելի աղբյուրներին դիմելու պարագայում մեծ հավանականությամբ կպարզվեր գումարների չափերի անհամապատասխանությունը իրականությանը:

4. Ելնելով վերը նշվածից՝ Դիտորդ մարմինը բավարար հիմքեր է տեսնում հրապարակման մեջ կողմնակալ վերաբերմունք և Կանոնագրի 6.1. կետի խախտում արձանագրելու համար:

6. Միևնույն ժամանակ, հաշվի առնելով antifake.am կայքի՝ ոչ միանշանակ լրատվամիջոցի կարգավիճակում հանդես գալը, որպես այդպիսին՝ ինքնակարգավորման նախաձեռնության մաս չկազմելը, ինչպես նաև դիտարկվող հրապարակման ժամկետների անհամապատասխանությունը Դիտորդ մարմնի ընթացակարգերին, սույն կարծիքը Տեղեկատվական վեճերի խորհրդին տրամադրվող զուտ խորհրդատվական բնույթ է կրում: ԴՄ խորհրդատվական կարծիքի նպատակահարմարությունը պայմանավորված է դատական կարևոր նախադեպով, որը սկիզբ է առել 2020 թվականին և արժանացել ՏՎԽ-ի փորձագիտական վերլուծությանը:

Ընդունվել է 2023 թ. օգոստոսի 15-ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ կազմով

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ, «Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության գործադիր տնօրեն
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ, ռեժիսոր, Երևանի թատրոնի և կինոյի ինստիտուտի պրոֆեսոր
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, «ԳԱԼԱ» հեռուստաընկերության գործադիր տնօրեն
Արա ՂԱԶԱՐՅԱՆ, իրավաբան
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Նյումեգ» հրատարակչության գլխավոր խմբագիր
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր, պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորել են ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցները, որոնք այս պահին 76-ն են: ԴՄ-ն ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2023 թվականի հունիսի 25-ի ընդհանուր ժողովում: